

ՀԱՆԴԷՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Մ Ո Ւ Թ Ն Ե Ւ Լ Ո Յ Ս

ՅԱԽԱՐԱՅՐԵԱՆ ԴԱԷՏԻՆ

Որոտացիւր յաւէտասքանչդ 'ի լարս , բամբիւն հայրենի ,
Եղթական օրհներգութեամբ ըզյիշատակ քաջազանց ,
Որ 'ի սըրտի ըզհայրենեաց սէր՝ յերկնայինն եղեալ հուպ ,
Եւ յերկուցն 'ի մի խառնեալ՝ դործ ձուլեցին հրաշարուեստ : ...

Եամօթ Զանդիկըդ լեր թըշուառ , թըշուառագոյն ծընողն ըզքեզ ,
Աղէտք և փառք տան Հայկազանց , դըժոխագէմ դենիմագէզ .
Ժահր և թոյն յանիծակուռ ելցէ գըրոյդ մեհենական ,
Ի խաւար անդընդային շիջուցանել ըզլար ոգիդ :
Միրտ մոխրապաշտ , ճիւղաղատիպ ժայթքեալ 'ի սեաւ սանդարպետէն ,
Որ զերկիր համբուն և զօդ պըղծեր 'ի շունչ մահահանգոյն ,
Օ'ն , 'ի հանդէս եկ . քեզ հրաւէր կարդամ , յաւէտ գիշերագէմդ ,
Ըզզազրաթոյր դէմնդ անդեղեայ եկ բարեբըլ թէ ժպըհիս :
Օ'ն , եկեսցեն մոլի ախտաբոց , հըմայեսցեն , ռամ առ 'ի մէնջ
Ի յաստեղաց կընքեալ անդարձ պերճ յաղթութեանն իցէ պատգամ .
Մի՛ քրիստոսի մարդացելոյն թէ քո սըտոյդ Զըրուանայ .
Նազովրեցւոյն թէ Որմըզդայ , անսրգ դենիդ՝ եթէ խաչին : ...
Հա , երևի , հա յառաջէ դըժոխերեան ահեղ վիշապ ,
Մուխ թանձրախիտ 'ի բերանոյն չըլեալ 'ի դուրս ամպակուտակ .
Ի ճակատուն բերեալ կրնիք , թէ « Եմ բանակ վե՛հ Զըրուանայ » .
Եւ 'ի յալումն ահեղաճօճ տէգ « յՈրմըզդէ առ Հարաման » : ...
Այլ քեզ աւաղ , Որմիգդ հըզօր , մատնեալդ 'ի ձեռս Հարամանոյ ,
Ճըշմարտութեան անլուր ականջ , աչք կուրացեալ լուսոյն հանդէպ ,
Եղծական արարածոյ յանդիմանեալ երկըրպագու :
Մեծ պաշտօնեայն քո արդ Եղկերտ , վըրէժխընդիր մեծիդ անուան՝
Ահա հարեալ 'ի շանթացայտ բանից քաջին Գարեգնի՝
Իբր ըզվիշապ կարեմէր պարգի , գելու գալարածկ .
Հապ սողոսկի , հապ յերկճիւղ չըլէ լեզու զարհուրագին ,

Այլ 'ի շրթթանց իւրոց ցոյտեալ յանձն իւր անդէն թոյնն առնէ դարձ
 Եւ նորակերպ առնու գալարս , յայտնեալ վիշապ սոսկալիթխար :
 Զօրութիւն մեծ դինքն ընկճէ , քարշէ ձըգէ շրթթայակապ
 Յաւարայրեան դաշտին հանդէս առ չար զովողս իւր սեւագունդ :
 Անդ միախումբ ահա յառաջ գան բիւրաւոր ջուր հաղարաց ,
 Եւ ըզգաշտին զերկայնութիւն առնուն պատել խառնափընդոր :
 Արեն 'ի միւտս իւր խոնարհի , մեծն այն աստուած տիեզերաց
 Ոչ բաւէ լուսաւորել ըզբողոր գունտն համանգամայն ,
 Այլ լըքանել ըստիպի ըզխաւարին զիւր պաշտօննայս ,
 Որոց խաւար 'ի հոգւոյ , խաւարանան և 'ի մարմնի : . . .

Ո՛վ Մովթղ Աւարայրի , քանի ահեղ և սոսկալի
 Ես , դժոխոց հանգունատիպ , քան զանէակ նախկին թոհ բոհն .
 Ի քեզ չիք գեղ և ոչ մի , զարհուրագին ևեթ շառաչ ,
 Կանչին կոռնչին կերկերաձայն և բիւրաւոր խուժ դուժ բարբառ :
 Ամենեցուն ահ 'ի սիրտ , դէմք յերկիւղի ամենեցուն ,
 Սարսուռ յոսկերս , ծունկք 'ի թընդոյ , ոչ կարեն կալ յակաստանի :
 Դողայ երկիր երերագին . քանզի ահեղ են զժոխոց
 Զօրութիւնք , 'ի դուրս զեռեալք 'ի հրաժորան լեռնէ հանգոյն :
 Անդ սեաւ ողիւրն գեհնին , ընդ կենդանեաց պաշտօնէից ,
 Ո՛վ սոսկումն 'ի պատմել , խընջոյս կազմեն անդընդային ,
 Եւ անապակ 'ի ժանտաբեր քամեալ յորթոյ՝ արբուցանեն
 Թըշուառական ոգւոցն , իսպառ զայնս արարեալ մըտակորոյս .
 Եւ 'ի բանըս քըմնելիս՝ տիեզերաց առ մեծ Հաստիչն
 Ամպարըտել տան , դժոխոց անլուր կըրիւք թըմբեցուցեալ :
 Մարդ աստուածատիպ , հոգի հանգոյն հրեշտակաց ,
 Թոր հասեր պայման կենաց մինչ ցանասունսն եղեալ նըւաստ ,
 Մինչև 'ի դևան . . . այլ զինչ ահեղս այս նորակերպ իցէ տեսիլ ,
 Որ 'ի խաւար խառնամբոխիս ըսպառնանկատ յաչս երևի . . .
 Ո՛վ որ 'ի սեաւն յայն երիվար գայ յառաջէ վայրագագէմ : . . .

Գրտաւ այր մի նենգամիտ , գաղտնադարան և հնարիմաց
 Առ ապաշնորհն Յազկերտ արքայ հրեշտակ սատան Սաղայելի .
 Հինաւուրցն այն ալևոր՝ յոր հանգուցեալ էր սատանայ .
 Արբանեակ ինքնայորդոր չարախտավատ իւր եղերանց :
 Ինքն ահա ժանտատեսիլն աշտանակեալ սեաւ յերիվար
 Սատանայի հարազատ , պիղծն անօրէն Միհրընբերսէհ ,
 Որոյ յաչս իւր տեսանի զազրաթորմի կըրից զուպար .
 Ո՛հ , քանի և 'ի հոգւոյ սընուցանէ զժոխս ահեղ : . . .
 Ահա անցեալ յառաջագէմ ընդ անօրէն զանդիկ մարդկան ,
 Ընդ մոգուց և համօրէն մեծամեծար աւագանւոյն ,
 Ընդ խաժամուժ զօրականին և ընդ բընաւ ջուրիս արանց՝
 Ի հուրն աստուած ամենեցուն գալ և երգնուլ կարգէր հրաման :
 ՊՐԱՅ Ա .

Անդ քանի՞ն դժոխային երեւոյն ժանտ մոլենախանձը
Յաղօտ լուսոյ խարուկին պայծառացեալք կիսամամսնեայ
Առաւել վայրագատես երեւին և սոսկալիք .

Այլ սոսկալիք յոյժ առաւել՝ ոգիք դժոխոց որ 'ի նոսին . . .

Յառաջեալ յամենեցունց սոսկավիթ խարըն Սաղայէլ ,

Ընդ Միհրնեբսեհն իւր հարազատ , կարկառեն զաջ իւրեանց 'ի հուր .

Եւ ահա պար ըզբազնաւն անդ բոլորեալ մագք և զըռոյն՝

Ըզգարելի պաշտօնին նըւագեցին զերգ պըղծալից .

« Երդնումք , գոչեցին միաբարբառ բարձրաբարոց ,

Քրիստոնէից սուր 'ի կողս՝ ըզվրէժ դենիս մերոյ հանել .

Նենգութիւն և խարդախանք և կեղծաւոր բանից պատրանք

Այս ամենայն մեզ օճան՝ զի վճար գործոյս ելցէ 'ի յանդ » :

Ըզնոյն երդումն ահաւոր մատեան կընքել յիւրեանց բարբառ

Ամենայն աւագ վըզրուկք , ըսպասալարքն և մեծամեծք .

Մի՛ որ մընայր դեռ առ բագնին և դէմքն հանգոյն չար մեղանաց .

Ամենեցուն աչք 'ի նա և աչք հոգւոյն իւր կուրացեալք .

Մատչի և նա . . . ո՛վ մեծ սոսկումն և ահաւոր , եղեռն անլուր . . .

Անըզգամն և ամպարիչտ իւրովքն 'ի հուրն անդ մերձենայ . . .

Տեսանին դեռ ևս , եղնւկ , հետք ինչ յերեսս ամբարըշտաց

Ընկալեալ կընքեալ յոխտէ աւագանին սրբոյ՝ շնորհացն

Անջինջ կընիք , զոր եղծեալ խանդարեցին յիւրեանց 'ի սիրտ .

Զայն 'ի հուր ահա ձըգեաց — բայց և անդուստ ձեռք անմեղաց

Զըգէին այլուր յերկինս հեծեծամուռնչ աղերսանօք : —

Երդուաւ մատնել նա զհայրենիս , — Եւ երդնութիւն նորա անդուստ

Վրէժ հայրենեաց : — Երդուաւ մատնել նա ըզկըրօնս : — Երդուան նորա

Ըզվրէժ կրօնից : — Մատնել երդուաւ զՍատուած : — Երդուան յՍատուծոյ վրէժն :

Ահափետը անհրնարին կալաւ զԱրիս և զԱնարիս .

Սոսկացան հիազարհուր և չար ոգիք տարտարոսին .

Ի նախանձ հատաւ ինքնին գոռ Սաղայէլն ամբարտաւան՝

Զի քաջազօր զայլ որ դիտէր քան զանձն 'ի հնարըս չարութեան .

Ո՛վ վասակ թըշուառական , մատնիչ կրօնից և հայրենեաց :

Բարէ , աւանդ , նըւիրեաց զանձն առ Սաղայէլ պիղծն վասակ .

Եւ Սաղայէլ եղև նըմին 'ի զրահ , վահան , 'ի լանջապան .

Վառեցաւ նոքօք վասակ . թափուր յաշոյն ամենակալ՝

Արդարութիւն՝ ըզնըժարըս իւր կըշուեաց անդ 'ի բարձունս . . .

Մեծ տեսանողդ Արտաշատու , ահա գառիւքն լուսակիզք

Ի սեւամորթ փոխեալ 'ի գայլս , 'ի զըւարակ զաղբատեսիլ :

Ո՛վ տեսարան աղիտաւոր , վըճիռ կընքեալ անդարձաբար .

Տեսանեմ և ահա մըթին որմունք սեւա թանձրամած ,

Եւ զընդան մի անյուշից , լի քըստմնեղեաց յիշատակօք . . .

Ո՛վ որ այն որ 'ի շըղթայս անդ մըռնչէ դառնահըծօրն . —

Ոսկերոտիք և եթ անջիւք և չեղջակոյտ որդնեալ մարմին
Շուրջ պատի զանգամովք յուսակըտուր մահապարտին : —
Քաւ , ծն , քաւ ամպարիտք , ոչ նիրհն աչքն ամենատես ,
Ոչ հանգչի ձեռն ամենակալ , քաւ ոչ բազուկն ամենազօր .
Անողորմն իշխան Սիւնեաց՝ ողորմութիւն ոչ գրտանէ ,
Վասակ մատնիչ հայրենեաց , անարգամահ անդ սատակի :
Վասակ , վասակ ուխտադրուծ , ոհ , ուրանաւ դու զհայրենիս .
Ուրացաւ և նա ըզքեզ , ջրնջեաց զանունդ և աւերեաց .
Ջայն 'ի դասուէ որդուց իւրոց , թող թէ 'ի թուոյ թագաւորաց .
Հազարբերան անիծիւք կուտեաց ըզվրէժ իւր 'ի թըշուառդ .
Անէճք յերկնից և յերկրէ , անէճք վրիժուց յորմէ ծընար ,
Անէճք յՈւխտէն՝ զոր լըքեր , յԱւազանէն՝ զոր պըզծեցեր ,
Ի Բարձրելոյն՝ զոր ուրացար , յանվերջ դարուց հանգերձեւոց .
Անէճք համայն ըզքեւ բոլոր պատատեսցին օձապըտոյտ : ...
Եւ յորսայսեալ փըչէ զողին , բարէ , թողեալ դի զազրատես ,
Հոտ ժանտամահ արձակելով՝ փըտտեալն յողուոյ և 'ի մարմնի ,
Օն , 'ի բաց խուսափեսցուք ... յաղթեաց անմահն արդարութիւն : ...

Այլ զինչ այս լոյս ահեղասքանչ , որ 'ի խաւար յաւիտենիս
Հրաշանըշոյն իբրեւ ըզսիւն յանապատին բոցափայլի ,
Կամ զերդ չըլծայ լուսահիւսկէն զերկիրս յերկին պընդեալ կապէ :
Ողջոյն ընդ քեզ , աստուածածաղ . լոյս , քեզ ողջոյն 'ի խաւարիս .
Ոչ 'ի յերկրէ է ծնունդ քոյին , այլ 'ի յերկնից՝ ձըգեալ յերկիր
Անփայլ , առ քեզ արդ շողասփիւռ յերկրէ 'ի վեր ծաւալանայ .
Սէր աստուածային , ով լոյս չըքնաղ , լոյս զեղափայլ :
Դու բոցակէզ արդ ճենճերիս , անշիջանուտ , անծախելի ,
Այլ էր 'ի քէն ոսկեփայլիկդ այդ բարդ 'ի բարդ ծուխ քաղցրանոյ՝
Առատաբուղի վերամբառնայ ճաճանչաւէտ և գեղավառ ,
Ականողիք իմ 'ի մըթան լուսատենչիկ առ քեզ դիմեն :
Ոհ , որպիսի այս տեսիլ ... սիրտն հայրենեաց ողջակիզի
Ի հուր սիրոյն աստուածայնոյ . ով ողջակէզ երկնահաճոյ ...
Ահա 'ի կողքս բոցատիպ այդր արձանին զըրոյմէ ալ
Անտես , զի « Մեծ սէրն Աստուծոյ քան զամենայն է մեծութիւն » :
Այլ ուր են , Տէր , ուր մատուցողքն անշիջանուտ պատարագիս ,
Ուր և տեղին յոր մատչին , յորմէ ծըխի այս բոյր քաղցրիկ :
Բարէ , նըշան զարմանալիք քան ըզհըրոյն բարեշնեան ,
Ծուխ ելանէ և չերևի ողջակիզեալն երկնից ընծայ : ...
Եւ ահա սիւնն 'ի յերկուս վերուստ 'ի վայր արդ պատառի .
Տեսիլ չըքնաղ ... բանակ զօրաց , զօրավարաց , քահանայից ,
Որ 'ի ներքոյ զահաւոր ըզպատարազն աստուածային
Մատուցանեն , նորազգեցիկք 'ի պատմուհան սպիտակափայլ :

Ահաւասիկ շնորհաց մանկունք ծընեալքն յուխտէ Աւագանին
 Սըրբութեան , նորոգածին չըքնաղ որդիք Հայաստանեայց :
 Գունդ է այս երկնաժողով նահատակաց ֆրիստոսի :
 Սոսկացիր անարգ Սասան , զի առ մի սուր 'ի սոցանէ
 երեք 'ի ձէնջ մընան վաղիւ 'ի վրէժ անուան Բարձրելոյն .
 Վարդանանց սուր՝ սուր երկնառաք , Ղևոնդեանց հուր՝ հուր լուսաւէտ :
 Ծաղկեալ տիովք երիտասարդք՝ որ նորազգեստ 'ի մաքրափայլ
 Պատմունճան սուրբ Աւագանին՝ ընդ առաւօտն առցեն վաղիւ
 Վըլկայութեան ըզծիրանի ներկեալ 'ի գոյն բոսոր արեան ,
 Եւ ընդ երեկս՝ ըզլուսակերտն արկանելի եթերական :
 Զարթիր զարթիր վեհազըն թոռն օրըրոյ մեծին դու Սահակայ ,
 Վանանդայ վարդապետին հրացայտ չըրթունք քեզ բարբառին ,
 Ա՛ռ և ընկալ 'ի նըմանէ ըզսուրն՝ յերկնից քեզ 'ի պարգև ...
 Հար շեշտակի , անկցին հազարք հազարաց ճետ՝ սէզ Սասանայ : ...
 Անդ երկնազէն նահատակին ելեալ 'ի դուրս 'ի խորանէն՝
 Ըզվեցից լուա բիւրուց կըրկնեալ ըզձայն խրախուսանաց .
 « Լսպարապետ սուրբ , կեցցես . քեզ ուխտադիր են հայրենիք .
 Ահա հովիւք աստ և խաշն յարօտս էին կամք միաբան ,
 Օ՛ն ըզվերջին լուիցեն երկինք զանքակտելին ուխտից բարբառ » :
 Մատեաւ էառ ըզսուրն յաջոյ Վարդապետին քայլն Վարդան ,
 Զըզեաց յերկինս և բոցադոյն չողաց երկաթն ընդ շուրջ հանուրս .
 « Երդնում » երիցս մեծաձայն հընչեաց լեզուն անպարտելի .
 « Երդնումք » երիցս եռանդադին կըրկնեաց բանալն անդ համօրէն
 « Երդնում » երիցս Արդարութիւն ետ արձագանգըս համասփիւռ :
 Անգանօր Վարդապետին սըրբոյ վառեալ սիրտն յերկնից հուր
 Եւ ըզհրախօս չըրթունան անլուռ լռեցուցեալ առ խուն վայրկեան
 Տարածաթիւ 'ի յերկինս , զերդ նոր ներսէս վեհապետ ,
 Եւ 'ի բարձու տեղով կացեալ իբրև հրսկող գիշերապահ՝
 Լուռ եկաց Ղևոնդիէ , մարմինն յերկրի , միտք իւր յերկինս : ...
 Հուսկ յետին ողջունի ևեթ հընչեն ձայնք հրաժեշտի ...
 Քահանայք կըրկնեն զողջոյն խաղաղութեան գիշերայնոյ .
 Հընչին և բիւրաւոր նահատակաց անդ ձայնք քաղցրիկ ,
 Նըադեռով զերզն հայրենի , մընչեն առ սէր անմահութեան ,
 Եւ յուսալիր բոլորանուէրք անգորրանան 'ի քուն խաղաղ :
 Արարածք համայն լըռեն , տըքնի յաստեղս Արդարութիւն : ...

Ահաւասիկ , իմաստութիւնդ յաւէժ և կամք անքընին ,
 Ահաւասիկ որոց բազուկք յերկինս առ քեզ վերամբարձեալ՝
 Խընդրեն ըզվրէժ անուան քո սուրբ , ըզկրօնից և զհայրենեաց ,
 Ահա իշխանք և քահանայք 'ի կոիւ քոյին են զինուորեալ :
 Զաջդ համբարձ , Ամենակալ , և կորիցեն գոռ Սասանեանք .

Հայեաց յերկիր և ցերուցուն անդունդք փառաց Պետականիդ ,
Մի ևեթ արա ակնարկ և վրէժ անուանդ ելցէ 'ի յանդ .
Զի եթէ դու ես զօրավիգն՝ ով ժրպրհեսցի իշխել ընդդէմ :
Զայն 'ի յերկնից ծաւալեցաւ . տեառնահաճոյ է սուրբ նուէրն .
Դաշտք Արտազու , յաւէժ վրկայք լերուք փառացն աստուածայնոց .
Եւ դու Կամար հաշտից ներկեալ 'ի սուրբ արիւն վարդանանց՝
Մեզ լուսափայլ պայծառացիր յաւիտենիս այսր 'ի խաւար :

Ե. Ա. Թ.

Շ Է Ք Ս Բ Ի Ր

Մ Ա Կ Բ Ե Թ Ո Ղ Բ Ե Ր Գ Ո Ի Թ Ի Ի Ն¹

Հ Ա Ն Դ Է Ս Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ՏԵՍԻՒ Ա

Ինվանես . — Գաշի ի Դղեկին :

Մտանեն Բանքոյ և Փլեանդէ , յառաջելով Սպասաւորի ջահ ի ձեռին :

Բանքոյ ,

Մանուկ , որ պահ է գիշերոյս :

Փլեանդէ

Եմուտ լուսին , ոչ լուայ զժամն :

Բանքոյ

Լուսինըն մըտանէ ըզհասարակ գիշերաւ :

Փլեանդէ

Կարծեմ , տէր , թէ անագան ևս իցէ :

Բանքոյ (Առ Սպասաւորն) .

Կա , ան զսուրն իմ : —

Ագահեն մեզ երկինք . շիջեալք են բնաւ լոյսը նոցին : —

¹ Տես Դ Պրակ , յէջ 339 :